ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՈՍՈՒԹՅՈՒՆ

Մ. Կ. ՋՈՒԼԱՅԱՆ, Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ., ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1980, 425 էջ։

XVI—XVIII դդ. Արևմտյան Հայաստանի պատմության մասին եղած սակավաթիվ ուսումնասիրությունները վերաբերում են հիմնականում տվյալ ժամանակահատվածի առանձին հարցերի կամ կողմերի լուսաբանմանը։ Ամբողջության մեջ վերցրած այդ դարերի արևմտահայ կյանքը խիստ թերի է մշակված։ Հայ պատմագիտության այս բացը լրացնելու աշխատանքն իր վրա է վերցրել Մ. Ջուլայանը, որը երկար տարիներ զբաղվելով Արևմտյան Հայաստանի XVI—XVIII դդ. պատմության հետազոտմամբ, ընթերցողի սեղանին է դրել իր աշխատանքի հանրագումարը կազմող գրախոսվող մենագրությունը։ Դրանով իսկ զգալիորեն ամբողջականացվեց արևմտահայության կյանքի տվյալ ժամանակահատվածի պատմությունը։ Այս իրողությունը պայմանավորված է հեղինակի, հատկապես բազմալեզու և տարաբնույթ սկզբնաղբյուրները քննադատորեն օգտագործելու հմտությամբ։ Պետք է նշել, որ խնդրո առարկա գիրքը արևմտահայերի պատմությունը չէ միայն։ Բազմաթիվ պրոբլեմներ հեղինակը հետազոտել է Մերձավոր արևելքի, Առաջավոր Ասիայի, Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի պատմության համապատասխան ժամանակաշրջանի հարցերի հետ սերտորեն աղերսված։

Գրախոսվող աշխատությունը կազմված է ներածությունից և հետևյալ չորս գլուխներից. 1. Արևմտյան Հայաստանի քաղաքական վիճակը XVI—XVIII դդ., 2. Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, 3. Սոցիալ-տնտեսական հարաբերություններն Արևմտյան Հայաստանում XVI—XVIII դդ., 4. Ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում XVI—XVIII դդ.։ Գրքի վերջում տրված են օգտագործված աղբյուրների ու գրականության, անձնանունների ու տեղանունների ցանկեր։

Մ. Ջուլայանի աշխատությունը գրված է բազմալեզու հարուստ նյութերի հիման վրա, որոնց հակիրճ քննական վերլուծությունն ու արժեքավորումը տրված է ներածության մեջ։ Այնտեղ գնահատված են նաև այն բոլոր ուսումնասիրությունները, որոնք այս կամ այն չափով աղերսվում են խնդրո առարկա պրոբլեմին։

Աշխատության առաջին գլխում քննության առարկա է դարձել տվյալ ժամանակաշրջանի թուրք-պարսկական պատերազմների ու արշավանքների հետևանքով Արևմտյան Հայաստանում ստեղծված մղձավանջային իրադրությունը։ Խոսքը ռազմական թոհուբոհի ոլորտն ընկած խաղաղ բնակչության կրած տառապանքների ու զրկանքների մասին չէ, այլ այն մասին, որ պատերազմող կողմերը, գտնվելով «ֆեոդալիզմի զարգացման ամենացածր՝ բարբարոսական աստիճանի վրա» (Կ. Մարքս), նվաճված շրջանների խաղաղ ազգաբնակչությանը (մասնավորապես հայ) դիտում էին որպես իրենց բազմատեսակ կարիքները բավարարելու կոչված մի տարր, չխնայելով ո՛չ տեղի բնակչության արժանապատվությունը, ո՛չ կյանքը և, առավել ևս, կայքը։

Մեր կարծիքով, հեղինակը ճիշտ վարված կլիներ, եթե արևմտահայերի հասարակական կյանքին նվիրված էջերը (իսկ դրանք ցրված են ամբողջ գրքով մեկ) ի մի բերեր և ամփոփեր առանձին գլխում։

Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության գլխին խսկական պատուհաս էր ջալալիների շարժումը, որի ծագման պատճառներին և ընթացքին է նվիրված գրախոսվող աշխատության երկրորդ գլուխը։ Հեղինակը ճիշտ է, գտնելով, որ ջալալիների շարժումը գլխավորում էին մանր ու միջին ֆեոդալները՝ իրենց զորավիգ դարձնելով ապադասակարգայնացված տարրերին։ Ուրմն այդ շարժումը ոչ այնքան դասակարգային, որքան ներդասակարգային պայքար էր իշխող թուրք ֆեոդալների միջև, որին հարել էին «դատարկապորտ թափառաշրջիկները, որոնք դարձան ջալալի ապստամբների հիմնական շարժիչ ուժը» (էջ 142)։

Գրախոսվող աշխատության արժեքավոր մասն է Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերլուծությանը նվիրված երրորդ գլուխը։ Բազմաբնույթ աղբյուր-

ների հմուտ օգտագործումը և քննախույզ վերլուծությունը Մ. Զուլալյանին հնարավորություն են տվել ներկայացնելու Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական հարաբերությունների իրական պատկերը, ուրվագծելու այդ հարաբերությունների զարգացման միտումները, բացահայտելու դրանց հետամնաց ու վայրագ էությունը։ Հանգամանորեն քննելով հողատիրության և հողօգտագործման ձևերը, տարատեսակ հարկերն ու տուրքերը, որոնց գանձումը, որպես կանոն, ուղեկցվում էր հայ աշխատավորության նկատմամբ գործադրվող կամայականություններով, բռնություններով ու շարաշահումներով, հեղինակը ներկայացնում է հայ հարկատուի անմխիթար վիճակը՝ որպես Թուրք նվաճողների կողմից հայ ֆեոդալական հասարակարգին պարտադրված խորթ ու զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող սոցիալ-տնտեսական հարաբերությունների արդյունք։ Իսկ եթե սոցիալական լծին ավելացնենք նաև ազգային այն անլուր ճնշումները, որ հայ ժողովրդի նկատմամբ կիրառում էին Թուրք նվաճողները, միտելով ոչնչացնել ազգային անկախության ձգտող արևմտահայության ուժերը, ապա հասկանալի կդառնա այդ շրջանում առկա սոցիալ-տնտեսական հարաբերությունների և քաղաքական կարգի կորստաբեր լինելը մեր ժողովրդի արևմտյան հատվածի համար։ Իրավացի է հեղինակը, գտնելով, որ «Օսմանյան տիրապետությունը ոչնչով չնպաստեց Հայաստանի այս մասերի զարգացմանը» (էջ 311)։ Բայց ասված է մեղմ. իսկն այն է, որ այդ տիրապետությունը կործանարար եղավ հայ ժողովրդի արևմտյան հատվածի համար։

Առանձնակի հետաքրքրությամբ է կարդացվում գրախոսվող աշխատության չորրորդ գլուխը, որը նվիրված է Արևմտյան Հայաստանում XVI—XVIII դդ. տեղի ունեցած ազատագրական շարժումներին։ Հայտնի է, որ XVI—XVII դդ. արևմտահայ ազատագրական մտքի ու պայքարի լուսաբանման ուղղությամբ զգալի աշխատանք է կատարվել, սակայն նույնը չի կարելի ասել XVIII դ. մասին։ Այդ հարցն ամբողջական ուսումնասիրության առարկա է դարձել միայն Մ. Զուլալյանի մենագրության մեջ։ Հենց սկզբից նշենք, որ հեղինակը սահմանազատում չի կատարել արևելահայ և արևմտահայ ազատագրական շարժումների միջև, այլ դրանք դիտել ու քննել է մեկ ամբողջության մեջ, որպես համընդհանուր ու համահայկական երևույթ։ Նա ցույց է տվել Արևմտյան Եվրոպայում հայ ազատագրական շարժման գործիչների դեգերումների անհեռանկար լինելը և այդ շարժման կողմնորոշման էվոլյուցիան դեպի Ռուսաստան։

Գրախոսվող աշխատության անուրանալի արժանիքներից է նաև այն, որ այն գրված է արծարծվող հարցերի շուրջ արդի Թուրք բուրժուական պատմագիտության մեջ տիրապետող հակագիտական դրույթների ու կեղծիքների մերկացման դիրքերից։ Մ. Զուլալյանը լուրջ փաստարկներով բացահայտում է նաև Թուրքական աղբյուրների միտումնավորությունը։

Մենագրությունը, սակայն, զերծ չէ մասնակի թերություններից, անհաշող ձևակերպումներից։ Նշենք դրանցից առավել աչքի զարնողները։ Խոսելով Թուրք-պարսկական պատերազմների հետևանքով Արևմտյան Հայաստանին հասած ավերածությունների մասին, հեղինակը գրում է. «1551 թ. կզլբաշները կրկին հարձակվեցին Արևմտյան Հայաստանի ու Քրդստանի վրա՝ ավերելով ու ամայացնելով երկիրը» (էջ 42)։ Այստեղ, սակայն, տուժած թվարկված վայրերը բուն հայկական հինավուրց բնակավայրեր են և ոչ մի առնչություն չունեն Քրդստանի հետ։ Անհրաժեշտ էր այստեղ և այլուր հստակ տարբերակել Արևմտյան Հայաստան պատմաաշխարհագրական կոնկրետ հասկացողությունը Քրդստան կամ Թուրքական Քրդստան հասկացողությունից։ Նույն բնույթի վրիպում ենք համարում հետևյալ ձևակերպումը. «Գրավելով Արևելյան Հայաստանի մի զգալի մասն ու Նախիջևանը, Թուրքերը ստիպված եղան դադարեցնել բանակի հետագա առաջխաղացումը...» (էջ 45)։ Ակնհայտ է, որ հեղինակը նման ձևակերպումով մեղանչում է պատմական ճշմարտության առջև՝ Նախիջևանը անջրպետելով Արևելյան Հայաստան հասկացողությունից։

Անշուշտ, ճիշտ է հեղինակը, երբ գրում է, թե Թուրքիան աշխատում էր Իրանին Թույլ չտալ Ռուսաստանի հետ ընդհանուր ճակատ կազմել իր դեմ։ Սակայն մի՞թե Թուրքիայի այդ ձգտումը պետք է բացատրել Ռուսաստանից սպասվող վտանգով, վտանգ, որ իբր կարող էր սպառնալ Թուրքիայի շահերին Անդրկովկասում։ Այն ժամանակներից, երբ 1557 թ. Դուսաստանի կազմի մեջ մտավ Կաբարդան, ռուսական արտաքին քաղաքականությունը մտահոգված էր զլխավորապես ոչ թե Անդրկովկասով, այլ իր հարավային սահմանների պաշտպանությամբ, հատկապես այն բանից հետո, երբ 1475 թ. Ղրիմի խանությունը դարձել էր Թուրքիայի վասալը։ Հետևաբար, եթե անգամ ռուսական արտաքին քաղաքականությունն ուրվագծում էր Սև ու Կասպից ծովերի միջև ընկած տարածքը գրավելու որևէ հեռանկար, ապա դա չի կարող շփոթվել որ-

տաքին խիստ ակտիվ քաղաքականության հետ, քաղաքականություն, որը շոշափելի դարձավ բավականին ուշ՝ XVII դ. վերջերին։

Մեր մյուս դիտողությունը վերաբերում է հեղինակի այն մտքին, թե իբր 1768—1774 թթ. ընթացքում Արևմտյան Հայաստանում նկատվող ազգային-ազատագրական խմորումները սոսկ այն պատճառով ցանկալի ավարտ չունեցան, «քանի որ Տոտլեբենի զորքերը Կովկասում անհայտողության հանդիպեցին» (էջ 393)։ Նկատենք, նախ, որ պատերազմի տարիներին խիստ սահմանափակ ռուսական զորք մտցնելով Վրաստան, ռուսական կառավարությունը շատ ավելի համեստ նպատակներ էր հետապնդում, քան կցանկանային թուրքական լծի տակ հեծող ժողովուրդները։ Երկրորդ, XVIII դ. ռուսական արտաքին քաղաքականության համար կենսական նշանակություն ունեին Ղրիմի և Արևմտյան Ուկրաինայի ու Արևմտյան Բելոռուսիայի՝ իրենց հրատապ լուծումը պահանջող խնդիրները, ուստի և այդ տարիներին հնարավոր չէր նշված ժողովուրդների ազատագրական ոգորումների լծորդումը ռուսական զենքին և դրա աջակցությամբ թուրքերի գերիշխանությունից ձերբազատվելը։

Մի շարք տեղանուններ ու անձնանուններ տրված են ո՛չ իրենց ավանդական՝ հայկական, ձևերով, այլ՝ թուրքական կամ պարսկական։

Կարծում ենք, որ խիստ շահեկան կլիներ, եթե XVI—XVIII դդ. Արևմտյան Հայաստանի պատմությանը նվիրված սույն մենագրությունը ստվարանար ի հաշիվ տվյալ ժամանակաշրջանի արևմտահայ մշակույթի պատմության բաժնի։

Չնայած նշված դիտողություններին, Մ. Ջուլայյանի մենագրությունը ամբողջությամբ առած լուրջ ներդրում է սովետահայ պատմագիտության մեջ։

ՎԱՀՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու.
ԱՂԱՎՆԻ ՈՒԹՈՒՋՅԱՆ